ՀՀ շրջակա միջավայրի

նախարարի տեղակալ Տ. Գաբրիելյանին

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի պատասխան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2022թ դեկտեմբերի 28-ի թիվ ՀՀ/26,1/35231-2022 գրության, կապված ՀՀ Կոտայքի մարզի 2018թ փետրվարի 22-ի 191-Ն որոշմամբ սահմանված մշտադիտարկումների իրականացման և դրանց արդյունքների վերաբերյալ եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվության ներկայացման պահանջի հետ, հայտնում եմ, որ ընկերությունն իրականացրել է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, որոնց ծավալները շատ չնչին են և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գրեթե զրոյական է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երևակումը վարչական տեսանկյունից գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Արամուս համայնքի վարչական տարածքում, տեղակայված է Արամուս գյուղից 2.0կմ հարավ-հարավ արևմուտք, և իրականացրած աշխատանքների փոքր ծավալները, ուստի որևէ ազդեցություն չեն կարող ունենալ համայնքի վրա՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գրեթե զրոյական է:

Միաժամանակ հայտնում եմ, որ նշված որոշման մեջ պահանջվում է մշտադիտարկումներն իրականացնել հավատարմագրված լաբորատորիաներում, որի վերաբերյալ տեղեկատվությանը ընկերությունը չի տիրապետում:

Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ՀՀ-ում հավատարմագրված լաբորատորիաների վերաբերյալ՝ հետագայում բարեխիղճ պարտավորություններն իրականացնելու համար:

Ինչպես նաև հայտնում եմ, որ ընկերության երկրաբանահետախուզական աշխատանքների թույլտվության ժամկետն ավարտվել է 2023թ հունվարի 17-ին:

Հարգանքով՝

<<ԱՐ-ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ տնօրեն՝ Դ. Ազատյան

Հասցե՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ազատության պողոտա, շ. 12/3, բն. 25
Հեռ.՝ 094932088
E-mail: dazatian@mail.ru

16.02.23թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք No 21-3449
16 » 02 2023թ.